

5507


ЗКП14

С-263

ԱՇԽԱՏԱՆԻՍՅԱՆ

# ՅԵՐԿՈՒ ԲՆՈՒՅԹԱԳԻՐ

—| US. ՀԱՀՈՒՄՅԱՆ ՅԵՎ ԱԼ. ՌՈՒԲԵՆ |—



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ, 1927

(B3) 9 AUG 2005

1 DEC. 2009

ՀԱՐԴԻԿ  
Հ-262.  
ԿՊ.

ԱՇԽԱՏԱՆԿԱՅԱՆ

# ՅԵՐԿՈՒԻ ԲՆՈՒՅԹԱԳԻՐ

4036

Ա. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՅԵԿ ԱԼ. ՌՈՒԲԵՆԻ



25 OCT 2013

5507

«Յերկու քնութագիր» վերնազրի ներքո միացված են հեղինակի յերկու հոդվածները՝ Ստ. Շահոմյանի յեվ Ալ. Ռուբենու մասին։ Առաջին հոդվածը տպագրվել է 1919 թ. մայիսին Մոսկվայում «Կաղմիք Դրոշակ» թերթի № 2-ում՝ յեվ ապա արտատպվել նոյն տարում՝ Աստրախանի «Կաղմիք Բանվոր» թերթի եջերուս—«Ստ. Շահումյանի տեղը հայ բանվորանկան շարժման մեջ» վերտառությամբ։ Յերկրորդը լույս է տեսել 1922 թվի ապրիլին «Խորհրդային Հայաստան»-ի № 79-ում՝ յեվ արտատպվել 1923 թվի ապրիլին Բազիկ «Կոմմոնիստ»-ի № 43-ում—«Ճատուրը» վերնազրով։



9031-56

№ 518

Գրատեսպիար 105 (բ)

Տիրամ 1.500

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՏԵՂԸ ՀԱՅ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՄԱՆ ՄԵԶ

Ընդունված կանոն և ազգային սրբերի շարքը  
դասել նրանց, վորոնք գործել են և մեռել ազգի ընդ-  
հանրության համար, կամ նրանց, վորոնց հայեցողու-  
թյան ու ներգործության ասպարեզը շրջադպել և աղ-  
դային մեկուսացման սահմաններով:

Ստ. Շահումյանն այդ իմաստով մեր ազգային  
սուրբը չեւ և վոչ անգամ մեր հերոսը: Սակայն Շա-  
հումյանն ամենից առաջ հայ բանվորությանն և նվի-  
րել իր յերիտասարդական որերն ու գործերը: Պատ-  
ռելով ազգային մեկուսացման այն քողը, վոր մթա-  
գնում եր հայ բանվորության գիտակցական հորիզոնը՝  
նա հերոսացավ ամենից առաջ հայ բանվորական շարժ-  
ման և հայ սոցիալիզմի պատմության մեջ:

Շահումյանն աշակերտել եր յեվրոպական սոցիա-  
լիզմին: Կարև Մարքսի գիտական ուսմունքը ծանոթ եր  
նրան գերմանական ակունքներից: Հեղափոխական  
դաստիարակություն և կուսակցական ու քաղաքական  
դիրք ստացել եր նա համառուսական շարժման մթնո-  
լորտում: Ռուսաստանում նա Հոկտեմբերյան հեղափո-  
խությունը կաղմակերպող կուսակցության կենտրո-  
նական մարմին անդամն եր, իսկ Կովկասում՝ այդ հեղա-  
փոխությունից յելած համառուսական կառավարու-  
թյան պաշտոնական բերանը:

Յեկ սակայն՝ այս լողորը ձևական արժեք ունին  
և չեն շաղափում Ստ. Շահումյանի սեալ քաղաքական  
նկարագիրը:

Վորպես գործիչ նա մեծություն եր անդրկովկաս-  
սյան մասշտաբով։ Կուսակցության համագումարների  
ու կենտրոնական օրգանների մեջ նա մասնակցություն  
եր ունենամ վորպես կուսակցության անդրկովկասյան  
կազմակերպությունների ներկայացուցիչ։ Իսկ ծայրա-  
գավառում հանդես եր գալիս կուսակցական կամ  
խորհրդային կենտրոնների պատգամով շնորհիվ այն  
արտակարգ աղքացության, վոր գայելում եր նա յեր-  
կրում վրչ միայն իր համախոնների, այլև հակառակորդ-  
ների շրջանում։

Անշուշտ լոկ անձնական բարեմասնություններով  
չեր պայմանավորվում է Ստ. Շահումյանի այս յեղակի  
դերն Անդրկովկասում, այլ նաև և առաջ այն որյակտիվ  
նշանակությամբ, վոր ստանում եր նա իր հետեւ կան-  
գնած հեղափոխական մասսաների շնորհիվ։ Ազգային  
կումիսերի և դասակարգային բաղկումների անդրկով-  
կասյան ժխորում Շահումյանը նկատվում եր վորպե-  
յերկը միջազգային աշխատավորության հարազա-  
թարգմանը, վորպեսնրա հեղափոխական հասունության  
ու վարքի չափանիւը,

Բայց և այնպես՝ այս լայն հարթության վրա չեն պոր պատկերանում են մեզ Ստ. Շահումյանի պայծառ ու հերոսական դեմքը։ Ընդհանուր շրջանակի մեջ նա ներկայանում է մեզ, վորպես միջազգային սոցիալիստական հեղափոխության անձնվեր զինվոր և վորպես անդրկովկասյան շարժման պատասխանատու վարիչ։ Շահումյանը զործում երկ՝ զեկավար ունենալով իրանային վարքագիծը, վոր առաջազգում եր նրան ընդհա-

նուր շարժման դերակույցն շահը Յեղ գեռ ապագային  
և վերապահված վերջնական լսուք ասել այն  
բանի մասին, թե վորքան լավ եր ըմբռնել նա այդ  
շահը և վորքան անշեղ ընթացել այն ձանապարհով,  
վոր տանում ե դեպի կոմմունիստական շարժման ան-  
վար տանում:

Սակայն այսոր իսկ հնար և գնահատել Ստ.  
Շահումյանի գործերը, գիտակցել այն բացառիկ կշեռը,  
վոր ուներ նա մեր յերկարութ ու նախատեսնել այն հմայ-  
քը, վոր գեռ պիտի ստանա նրա գեմքը անցյալի հե-  
ռավորության վրա, յեթե բնորոշնեք նրա նկարագիրն  
այն «ազգային» շրջագծի մեջ, վորտեղ նա ամենից ա-  
ռաջ հայտնվեց վորպես ուսուցիչ ու զեկավար ու ամե-  
նից շատ պիտի հարդիքի վորպես հերոս ու նահատակ:  
Մեր խոսքը վերաբերում է Ստ. Շահումյանին վորպես  
հայ բանվորական շարժման անդուրական առաջնորդի,  
վորպես մի մարդու, վոր իր համարձակ կյանքով ուր-  
բագործեց հայ իրականության մեջ կոմմունիզմի դրո-  
շակը և ընկավ պայքարի մեջ, վորպես անձնազո՞ն հերոս:

Բանվորական շարժումը հայ իրականության մեջ  
ընդունված յերկու տասնամյակ ընդգրկող անցյալ  
ունի, և Ստ. Շահումյանն արգեն խոլ այդ շարժման  
յերկորդ շրջանին ե պատկանում: Անցյալ զարի վեր-  
ջերբին ու ներկա դարի սկզբներին բանվորական շար-  
ժերին ու նահանգական պահանջների դաստիարակում եր բանվոր դաստի-  
արակը մեղանում սահմանափակվում էր բանվոր դաստի-  
արակի տնտեսական պահանջների պաշտպանությամբ:  
Կարգի տնտեսական պահանջների պաշտպանությամբ:  
Բանվորական շարժման առաջնորդները սահմանափակ-  
վում ենին այն դաստիարակարգային պայքարի կազմակեր-

պությամբ ու ղեկավարությամբ, վոր բղիսում եր այդ պահանջները բավարարելու կարիքից: Քաղաքական կռվի կարիքն արհեստակցական շարժման առաջարած ծրագրի իրագործման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու անհամեշտությամբ եր փաստաբանվում: Այդ սահմաններում իսկ բանվորական շարժման անդրանիկ առաջնորդները մեղանում դեռ պետք ե շարժման որինականության ապացույցներ բերելին: Ժամանակի նացիոնալիստական մտայնությունը Ռուսաստանի սահմաններում մերժում եր ամեն մի քաղաքական շարժում: Հայ բանվորության առաջնորդները պետք ե խիզախելին «հավելյալ արժեքի» մասին խոսելու այն որերին, յերբ Տաճկաց Հայաստանում հայերի «հավելյալ արյունն» եր հոսում: Ռուսահայ կյանքի տնտեսական սոցիալական ամեն մի պայքար ու ճնշամամ դաշնակցական վերընթաց հոսանքն աշխատում եր խեղզել՝ ուղղելով հայ աշխատավոր մասսաների ուշքն ու միտքը սահմանից անդին, զեպի նոր հայության ավետյաց յերկիրը: Հասարակական ամեն մի շարժում դրվում եր ազգային փակոցի տակ և մթագնում այն յուրահատուկ մեսիանականությամբ, վոր հայ քաղաքական գիտակցության դարավոր ժառանգությունն եր կազմում:

Հեղափոխական վերահաս շարժումը Ռուսաստանում, գասակարգային շերտավորումն ու աճող պայքարն Անդրկովկասում և ազգային ոեպրեսսիաների ձեռվով և այդ բոլորի քաղաքական անդրագարձումը մեր յերկրում յեկան շարժելու հայ հասարակական կյանքի ճահճը: Յերկրի արդյունաբերական կենտրոններում ուժատացան հայ բանվոր գասակարգի ուրույն շարժումը

և այդ շարժումը ղեկավարող կազմակերպությունները: Հայ բանվորը կարող եր խոսել իր կենսական կարիքների մատին, առաջադրել ու պաշտպանել իր անմիջական պահանջները սահմանի այս կողմը: Ազգային կազմակերպություններն ու կուսակցությունները դասավորվության կամ անդամանքով: Համապետական շարժումը ղեկավարող կազմակերպությունները մուտք են գործում հայ միջավայր և զինվորագրում հայ մասսաներն ընդհանուր պաքարի համար: Սոցիալ-գեմոկրատիան նաև հայ իրականության մեջ ճանաչվեց բանվորության տրնտեսական դատի պաշտպան և այդ հողի վրա՝ նրա դասակարգային կռվի ղեկավար:

Սակայն հայ բանվորությունն իր ամբողջությամբ զեր չեր ազատագրվել ազգային կուսակցությունների շարժումը նաև դուրս չեր յեկիլ տակավին գիտակցության խանձարությունը: Համակերպվելով բանվորական շարժմանը, հայ ազգայնական կուսակցությունները շարժումը եյին սոցիալիստական ֆրազիոնգիայի փեղարգարվում եյին սոցիալիստական ներքո կաշկանդում տուրքներով և իրանց ազգեցության ներքո կաշկանդում տական աշխատավորական մասսաների խոշոր հատվածը: Ազգայնական կուսակցություններից անջատված «յերիտասարդները», լրջության տեսք տալով քաղենիական սոցիալիզմին, փաստորեն միայն բանվորական կուսակցությունից եյին անջատում հայ աշխատավոր մասսաներին և իրոք գնում նրանց ազգայնական կազմասաններին հայ բոլոր գնում նրանց աշխատավոր մասսաներին և իրոք գնում նրանց ազգայնական կազմասաններին հայ հովանու տակ: Սոցիալ-գեմոկրատիկ բոլոր գնումների հովանու տակ: Մեկուսացնում եր և տական հայ կազմակերպությունը մեկուսացնում եր և քաղաքական ամլության մասնում հայ բանվորներին

ուր ույն ազգ սյին շրջանսկիներում։ Հեռան ոլով բան-  
վորական միջազգսյին մասսաներից՝ նրա ղեկավար-  
ների մի մասը վարդապետական տոն պիտի տար մար-  
քսիստական քննադատությանն ու որհասական շրջան  
կատարեր հայ բանվորության կազմակերպչական հա-  
վաքման մտքից դեպի «հայության բաղաքական հա-  
վաքման» գաղափարախոսությունը։

Բայց յեթե հենց ինքը Ռուսաստանի սոցիալ-  
գեմոկրատիայի անդրկովկասյան մենշևիկյան հատվածը  
կատաղի կովկ մեղց բանվորական շարժման ազգային  
մեկուսացման դեմ և խոշոր աշխատանք թափեց հայ  
մասսաները միջազգային կողմակերպությունների մեջ  
մուձելու համար, այնուամենայնիվ, նա ևս չեր կարող  
հեղափոխական թափ հաղորդել մասսաների քաղաքա-  
կան դիտակցությանը։ Սահմանափակելով բանվորա-  
կան կազմակերպությունների գործունեյությունն արչ  
է և սական շարժման հոգսերով՝ մենշևիդի  
անդրկովկասյան հատվածը, մյուս կողմից, իր ամբող-  
ջությամբ մեկից ավելի անգամ և հանդես յեկել վրաց  
նացիոնալիզմի քողարկված ֆաստարանության դերում։  
Անդրկովկասյան մենշևիզմի որդանական այս արատը  
ցանկալի մի նպաստ եր հայ նացիոնալիստների քաղա-  
քական ագիտացիային և պետք եւ իջեցներ աշխատա-  
վորության աչքում սոցիալ-գեմոկրատական պրոլա-  
գանդի քաղաքական վարկը։

Բանվորական շարժումը բարձր պահեց հեղա-  
փոխական մարքսիզմի միջազգային գրողը յերկրի  
խոշոր արդյունաբերական կենտրոնում, Բաղվի բան-  
վորական ուսուցներում։ Սյատեղ եր, վոր շփվում եյին  
իրար հետ բաղմաղան աղբության պատկանող բան-

վորական հոծ մասսաները, և այդ պատճառով՝ իսկ  
պրոլետարիատի զասակարգային պայքարն այսուհեղ և  
ամենից շատ պիտի զերծ մնար քաղքենիական և ազ-  
գայնական շեղումներից։ Բաղվի բանվորական շարժումը  
տնտեսական պայքարի հունից ամենից կանուխ պիտի  
մտներ քաղաքական կովի սահմանների մեջ, Կուսա-  
կցության մեծամասնական հոսանքն այստեղ պիտի  
տարածեր լայնորեն իր ազգեցությունը և նախապատ-  
րաստեր բանվորական մասսաները քաղաքական գալիք  
հողմերի ու մըրիկների համար։

Քաղաքական իմաստով հայ բանվորությունը  
սոցիալիստական շարժման միջազգային և հեղափոխա-  
կան շավալի մեջ մտավ Անդրկովկասի բանվորական  
շարժման այս միջազգայրում, և նրա փայլուն արտա-  
հայտիչները յեղան մեղանում հայ մեծամասնականնե-  
րը, դեկավար ունենալով անդրկովկասյան մեծամաս-  
նականների ամբողջ հատվածի պարագլուխ։ Ստ. Շա-  
հումյանին։

\* \*

Շահումյանի և իր ընկերների դեկավարությամբ  
հայ բանվորական շարժումը քաղաքականապես ձուլվեց  
կովկասի և Ռուսաստանի շարժման հետ։ Հայ բանվո-  
րությունը միացավ Ռուսաստանի հեղափոխության հե-  
տևողական սոցիալիստական և հետեղական միջազ-  
գայնական հոսանքին։

Վորապես հուտոր և հրապարակագիր մեղանում  
Ստ. Շահումյանն և ամենից շատ հարվածել գործող  
«հեղափոխական» կազմակերպությունների մանր-բուր-  
ժուական և աղղայնական բնույթը, մերկացրել դրանց  
քաղաքական մտավախությունն ու գործնական հար-

մարտակաշտությունը։ Աղքային հարցն ու այն գործնական խնդիրները, վոր անդրկովկասյան պայմաններում առաջանում եին աղքամիջյան հարաբերությունների շրջանում, դառնում են Ստ. Շահումյանի տեսական հետաքրքրության գլխավոր առարկան։ Վորպես գրող Ստ. Շահումյանը՝ թողել ե յերկու ինքնուրույն աշխատություն («Աղքային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» և «Աղքային կուլտուրական ավտոնոմիայի մասին»)՝ յերկուսն ել նվիրված աղքային հարցի լուսաբանությանը կամ այդ հարցի վերաբերմամբ յեղած տեսությունների մարքսիստական քննադատությանը։ Նույն խնդրին են անդրադառնում հաճախ նաև Շահումյանի հոգվածներից շատերը, վոր ցրված են կովկասյան հայ և ոռոս պարբերականների ենիրում։ Աղքային հարցի շուրջն ե, վոր նա թղթակցություն ե ունենում ընկ. Լենինի հետ 1913 թ., մի շրջանում, յերբ, հեղափոխության գալիք վերելքի նկատառումով, մեր կուսակցությունը ձեռնարկում եր դեպի աղքային հարցն ունեցած հին վերաբերմունքի վերագնահատման։ Իր նամակներից միկում ընկ. Լենինը Շահումյանին աղքային խնդրով զբաղված «մտածող ընկերների» շարքն ե դասում ու սպասում նրանից խնդրի ավելի հիմնավոր լուսաբանությունը։

Սակայն աղքային հարցը լոկ տեսական նշանակություն չուներ Շահումյանի համար։ Վորպես բանվորական միջազգային կազմակերպության ղեկավարի՝ նրա համար անդրկովկասյան և մասնավորաբար հայ կյանքի պայմաններում խնդրի լուսաբանությունն ուներ առաջնակարգ գործնական արժեք։

Պարզաբանելով բանվորական ուսունական ժա-

մանակակից աղքայնության գասակարգային բնույթը, մերկացնելով աղքային հարցի լուծման բուրժուական և քաղքենիական հնարքների խարուսիկ ու ռեակցիոն պարունակությունը՝ Շահումյանը խիզախում եր ցիմսերվալյան հորդուր կարդալ մասսաներին, յերբ հայ նացիոնալիզմն իմարեցիստական պատերազմի տեսադով եր բանվել ու՝ ցարի կառավարության ղեկային քրքիջի տակ՝ «կամավորական շարժման» մզձավանջ ստեղծել։ Հեղափոխության սկզբին Շահումյանն եր, վոր քննադատում եր «աղղային զորագներ» կազմակերպելու ծրագիրը, բնորոշելով այն վորպես հականեցի զափոխության հանցավոր մտահղացում, վոր նպատակ ուներ վերջիներջո իրար գեմ զինելու Անդրկովկասի աշխատավոր մասսաներին։ Շամբորի ղեկարգությունները, սյան նացիոնալիզմի այն բոլոր վայրագությունները, վոր հաջորդեցին զրանց, յեկան ցույց տալու, թե վորքան լավ եր ըմբռնել Շահումյանն աղքայնական հղացման համար քաղաքական իմաստը ու վորքան ճիշտ կանցումների քաղաքական հիմաստը հետեւանքները։ Դեռևս տարիներ առաջ, խատեսել զրանց հետեւանքները, Դեռևս տարիներ առաջ, իր անդրանիկ աշխատության մեջ, Շահումյանն այն իր պահանջանում, թե աղքային հարցը ժամանակակից իմաստով բուրժուական պետության գոյության հարցն ե. ձեական տեսակետից ամեն մի աղքություն կամ պետություն ե յեղել, կամ ե, կամ ձգում թյուն մի աղքային կամ աղքամակերպության ղեկավարի՝ նրա համար անդրկովկասյան և մասնավորաբար հայ կյանքի պայմաններում խնդրի լուսաբանությունն ուներ առաջնակարգ գործնական արժեք։

կից հարակցության հանդեպ՝ Ստ. Շահումյանի տեսական աշխատ սննդերն իսկ իրանց աճողջ խորությամբ զնահատվել կարող են միայն այսոր:

Վորպես կուսակցական գործիչ և վորպես պետական մարդ գարձալ Շահումյանն եր, վոր պետք և կոչվեր զեկավարելու բանվորական հեղափոխության աղդամիջան հարաբերություններն ու Խորչըդային կառավարության աղդային քաղաքական քաղաքականությունն Անդըրկովկասի հեղափոխական և հականեղափոխական հորձանքների բաղնման դժնղակի հանգամանքներում: Խորհըրդային իշխանության հաղթանակը Բագվում վոչ միայն հենված եր բանվորական և զինվորական մասսաների հեղափոխական կողմակերպությունների վրա, այլև պայմանավորված Բագվի հականեղափոխական դասակարգերի ու կազմակերպությունների շահերի աղդային հակամարտությամբ: Մրամեցն եր Խորհրդային իշխանության ուժի և թուլության գաղտնիքը Բագվում: Մակայն պետք եր ունենալ Շահումյանի քաղաքական հոտառությունն ու գործնական հմտությունն այդ հարցերում, վորպեսի հնար լիներ գեթ առժամապես իշխանության քաղաքական հենարաններ փընտոել այնտեղ, վորտեղ գեռ թույլ եյին անտեսական կամ սոցիալական ուրույն նախադրյալները:

Իբրև մարդ, իբրև բարոյական նկարագիր Շահումյանը թերես ավելի խոշոր եր և ազգեցիկ, քան իբրև հրապարակախոս կամ քաղաքագետ: Շահումյանը բարոյական տաղանդ եր, և իր այդ հատկությունն եր, վոր առանձին կը եր տալիս իր խոսքին և ուժ՝ իր գործին: Բավական եր տեսնել մի անգամ իր լուսով գծված գեմքը, կարգալ իր մելամաղձոտ հայացքը կամ

ունկնդրել իր ձայնի աղնիվ շեշտին՝ գիտակցելու, թե պատաժխանատվության ինչ խոր զգացում կար իր խոսքի մեջ, շիտակության ինչպիսի ոիթմ իր գործերի մեջ: Բագվի քաղաքացիական կովի որերին հայ աշխատավոր մասսաները տարերային թափով դուրս յեկան ազգայնական կուսակցությունների ինսամակայիկան ազգայնական և հակամանքների ունալ դասակարությունից և զինվորագրվեցին սոցիալիստական հելությունից 3 Եթե այս յերեսոյն չենք դատության համար: Յեթե առաջ հանգամանքների ունալ դասակարող նախ և առաջ հանգամանքների ունալ դասակարությունից չենք անգիտանում և այն, վորությանը չբացատրել, չենք անգիտանում և այն, վոր մասսաների հոգեբանության մեջ նույն այդ հանգում մասսաների զնահատությունը անդրադառնում եր գամանքների զնահատությունը անդրադառնում եր նաև վորպես գետի մեր զեկավարն ունեցած անձնական վստահություն: Շահումյանի անձնական միջական վստահությունը չնորհիլ եր, նրա անմտության ու ազգեցության չնորհիլ վոր առաջացավ ձնական խորհրդով ու ցուցմունքով, վոր առաջացավ ձնական կոչված «Զախ գաշնակցականների» կազմայսպես կոչված «Թուլք հեղափոխական բանվորության կերպությունը և թուլք հեղափոխական բանվորությանը: Վոչ միայն հայ «Հյումմեթ» կոչված կուսակցությունը: Վոչ միայն հայ իրականության մեջ, այլև անդրկովկասյան ամբողջ իրականության մեջ չկար մի ուրիշը, վոր աբանվորական շարժման մեջ չկար մի ուրիշը, վոր աբանվորական շարժման մինչ կերպով անձնավորեր վելի ցայտուն և համոզիչ կերպով անձնավորեր վելի ցայտուն և ինտերնացիոնալի գաղափարներն ու հեղափոխական ինտերնացիոնալի գաղափարներն ու գործը, վորքան Ստ. Շահումյանը:

Իր հետևողականությունն այդ տեսակետից կասկածից վեր եր մոլեկուլ ազգայնականների համար կածից վեր եր մոլեկուլ ազգայնականների համար անգամ: Մեր կուսակցության քաղաքական ընդհանուր տեսակետից ինքնին հասկանալի մի վերաբերմունք եր տեսակետից ինքնին հասկանալի մի վերաբերմունք եր գացանական ընթացքը, վոր այնպիսի համառուայն բացանական ընթացքը, վոր այնպիսի համառուայն բացանական ընթացքը Շահումյանը անգիտացիներին Բաթյամբ ցուցագրեց Շահումյանը

գու թողնելու խնդրի նկատմամբ Այսոր, յերբ «դաշ-  
նակիցների» յերկաթե մագիլներն են հոշում ու խեղ-  
դում անդրկովկասյան բանվորության հեղափոխա-  
կան շարժումը, յերբ անգլիական իմպերիալիզմի դա-  
ժան ու դաշտական քաղաքականության արյունոտ և  
մահառիթ հետեւանքները հայ աշխատավորության վե-  
րաբերմամբ ծանոթ են ամենքին, այդ բոլորի մասին  
Շահումյանի արած մարդարեյականնախազգուշացում-  
ները կատարված և անժմտելի փաստերի կերպարանք  
են ընդունել. Այդպես չելին իր խոսքերը այն վայրկանին,  
յերբ նրանք արտասանվում եյին: Մուղանի անապատ-  
ներում շոգից ու ծարավից նեղված, քաղցից ու վարա-  
կից հյուծված, քաղաքական պրովոկացիայից և քաղ-  
քենի սին ու պատիր զրույցներից մոլորված ու բարո-  
յալքված հայ մասսաներին թվում եր, իրոք, թե միայն  
անգլիացիների վերահաս ոգնությունը կարող ե փրկել  
իրանց տաճկական յաթաղանի վրիժառու հարվածնե-  
րից: Հայ ժողովրդական մասսաների կյանքի և մահ-  
վան խնդիրն եր ծեծվում Բագվի Խորհրդի արտա-  
կարգ նիստերում անցյալ տարվա հուլիսին, և թվում  
եր շատերին, թե գեթ «Փիդիկական ինքնապաշտպա-  
նության» տեսակետից անգլիացիների մուտքը փրկա-  
րար կարող եր լինել հայերի համար: Նման պայման-  
ներում հեղափոխության առաջադրած միջազգայնական  
գծի անշեղ պաշտպանությունը պարզ հետեղականու-  
թյուն չեր միայն Շահումյանի կողմից, այլ և միջազ-  
գային հեղափոխության շահերին նվիրված մարդու  
հերոսական անձնազոհություն:

\* \* \*

Այսոր, յերբ մեզ գեռ նոր աշխատանք է սպասում փշտկությունը կոմմունիստական շարժ\*

ման զեմ կառուցված «ազգային պետական» շենքերը  
և նոր հոգսեր ծանրանում հայ կյանքում դորժողներիս  
վրա պատուելու ազգային մեկուսացման վերջին պատ-  
նիշները՝ հայ բանվորական շարժման և հայ կռմու-  
նիստական մտքի խոշոր գեկավարը մեզ հետ չե-  
թեվ ովկ կարող ե մատնանշել նրա գերեզմանն Անդըր-  
կասպյան յերկրի վայրի տափաստաններում։ Սակայն  
մեզ համար գերեզման չե Ստ. Շահումյանի հմայիչ  
անունը, այլ գաղափարական կենդանի դրոշ։ Յեվ մենք,  
վոր ընթանում ենք ուսուցչի քայլած ճանապարհով  
ու դիմում դեպի նոր հուսով ու անձկությամբ մեզ  
սպասող աշխատավոր մասսաները, խոր հավատ պի-  
տի ունենանք դեպի մեր գործի հաղթանակը, քանի  
վոր, ինչպես Մարքսն ե ասում, „Die Ideen werden zur  
Macht, wenn sie die Massen ergreifen. — Գաղափարներն  
ուժ են գառնում, յերբ նրանք համակում են մասսա-  
ներին։



## ԾԱՏՈՒՐԸ

(Ուրվագծեր իր կյանքի յեզ զործունելության օրջանից)

Նրա հայրը Շուշի քաղաքի ասիական դերձակ եր: Կար ժամանակ, յերբ այդ մարդը, հին սովորությամբ, բացառապես քաղաքացիներից եր պատվեր ընդունում: Բայց փոխվեցին ժամանակները: Հին կենցաղը տեղ արեց ապրուստի նոր ձևերին, հասարակական նոր հաճագույցի մեջ դրեց նույնիսկ հնասեր քաղքենուն: Առիական դերձակը պիտի նահանջեր յելրոպականի առաջ կամ գոյության իրավունք նվաճեր վերջինիս կողքին:

Մեր դերձակն ընթացավ վերջին ձանապարհով: Հետագայում նա պատվեր եր ընդունում գեղջուկ մուշտարուց, իսկ ավելի ուշ, կապվելով թուրք վաճառողի ու գնորդի հետ, միջնորդ ե դառնում «Լեզու ապրանքի» շրջանառության:

Պատանի Ծատուրը՝ այդպիս եյինք կոչում ընկերական շրջանում Ալ. Ռուբենուն, գերձակի վորդի Ալ. Ծատուրյանին, —մեծացավ նոր ձեալորվող կենցադի շրջանում, նոր պահանջների և հասկացողությունների մթնոլորտում: Բայց և այնպես, բեկվելով գավառական շրջավայրում, նրա մատաղ գիտակցության մեջ իսկ անդրադարձավ այն «ասիականությունը», զոր շարունակում եր իր գոյությունը հոր ձեափոխված տնտեսության մեջ անգամ: Նա յինթարկվում եր մի

մտայնության, վոր մերժում եր հինը, հրաժարվում ավանդական կարգ ու սարքերից: Նա վորգեգորում եր ընթացիկ պահանջներին, պաշտպանում ու մեծարում նորը: Սակայն և իր հրաժարիմքը և իր մեծարանքը հայտնաբերում եր նա ապգային-հասարակական այն ողակում, վորի մեջ գալարվում եր գավառի աղմկարաբար բաղմությունը—արհեստավորքաղքենին ու հաստաբազուկ գեղջուկը—անցյալ դորի 90-ական թվականներին:

Ընտանիք և դպրոց, յեկեղեցի և բարեգործական հիմնարկ, ու այդ բոլորը խեղղված հազար ու մի արգելքներով, —ահա ինքնագործության կոչվող գասակարգերի այն մթնոլորտը, վորից գուրս չաետք և լներ վոչինչ հասարակական շարժում, վոչինչ քաղաքական պայքար: Նոր ժամանակների, նոր կյանքի համար նեղ, խիստ նեղ եր գալիս հավաքական գոյության այդ պատյանից: Սակայն թույլ կամքով և ավելի թույլ կապատճակը գավառի մեկուսացած քաղքենիությունն անզոր եր ընդարձակելու ինքնագործության այդ շըրշանը: Մնում եր գնալ նվազագույն զիմաղրության ուղիներով, տոկալ ու տեհնչալ լավ որեր, յերազել կյանքի այն նոր հնարավորությունների մասին, վոր կյանքի այն նվաճական պատյանից յելած սուրը անձուկ կարող եր նվաճել պատյանից յելած սուրը անձուկ կացարանից զուրս, ազատ յերկնակամարի տակ, Ավետյաց յերկրում...

90-ական թվականների վերջերում հույգերի և լույսերի այդ աշխարհում եր ապրում նաև Շուշի քաղաքի «հեղափոխական» յերիտասարդությունը: Նոր սելնդի մտայնությունը տակամին չեր բոլորի իր կյան-

քի հերոսական շրջանը։ Հղի հանդւզն ծրագրներսվ՝  
ստեղծվեց հոգեոր մի մթնոլորտ, վորտեղ ծնվում եր և  
սնվում նաև դպրոցում սովորող մատաղ աշակերտու-  
թյունը։

Հասակակից ընկերներ եյին, տոգորված վառ  
ցնորքներով, լի յեռանդով, պատրաստ ամեն զոհաբե-  
րության... Դպրոցից դուրս կար ժողովատեղի, վոր-  
տեղ հետուում եյին քաղաքական գրականության, լուսում  
եյին զեկուցումներ «յերկրի» մասին, վեճի բանվում,  
վորոշումներ ընդունում, խմբագրում ձեռագիր թերթը՝  
«Կոկոնը»։ Մոտ հինգ տարվա կյանք ունեցավ «Կո-  
կոնը», և նրա անունով եր հնաց, վոր մկրտվեց խըմ-  
բակը։

Նշանավոր մի խմբակ եր դա, «սրբագան մի ըն-  
տանիք», վորի անդամներից շատերին վիճակված եր  
խոշոր մի դեր՝ հայ մեշանականության «ազգային-  
հեղափոխական» քաղաքարների կենսադործման արյու-  
նուու անապարհին։ Սոցիալական ընդհանուր շաղախից  
ծնված, «ուխտի» ընդհանուր ավագանում մկրտված,  
խանդակառ այդ պատանիների շրջանում եյին Մենա-  
կը, Խաչանը, Թորգոմը, Իշխանը, Արամը, Կոստյան,  
Շիրինյանը, Արարին, Լիտան, Սնարյանը և վերջա-  
պես Ծատուրը։

Ծատուրը ամենից ուշագրավ դեմքն եր խմբակի՝  
խոսելու և գրելու ձիբքով, խորհելու և վիճելու կարու-  
ղությամբ։ Պակաս ազգու չեր արտաքինը։ Այսոր իսկ  
պատկերանում ե նա ինձ աշակերտական գորշ բլուզի  
մեջ, հասակը պարթե, քայլվածքը դանդաղ ու խոհուն,  
նայվածքը խորաթափանց, ժպիտը հեղնուու իր շուրջն  
եր փովում ընկերների պատկառանքը, ակնածությունը։ Յեղ հասկանալի յի, Դերձակի վորդին դալիս եր

վրչի և խոսքի սուր ասեղներով և տը ամաբանական  
ամուր դերձանով իրար կցելու լսածն ու կարդացածը՝  
ընկերների մերկ հույզերը մտքի հանդերձով ծածկելու  
համար։ Ի զուր չե, վոր հասակակիցները «Շեքսպիր»  
անունն եյին տալիս նրան։ Ավելի փոքրերի բերանում  
եր միայն, վոր այդ անունը հերոսին խոցող զենք դար-  
ձավ...  
—

Ավարտելով դպրոցը՝ «Կոկոն»-ի զեկավարները չե-  
յին լքում նոր կազմակերպվող խմբակների իդեական  
յեկավարությունը։ Այդ զեկավարության և վերա-  
զըրվում և թեմական դպրոցի վարչության գեմ ուղ-  
ղված այն ցույցը, վոր բոնկեց 1901 թ. տարհական  
դված այն ցույցը, վոր բոնկեց 1901 թ. տարհական  
հանդիսավոր ակտի ժամանակ։ Դպրոցի հոգեոր աերե-  
հանդիսավոր ակտի ժամանակ։ Դպրոցի հոգեոր աերե-  
հանդիսավոր ակտի ժամանակ։ Վոստիկանու-  
րը քաղաքական գույն տվին ցույցին։ Վոստիկանու-  
րը թյան ձեռքը մատնելով «Կայսեր պատկերի առաջ»  
թյան ձեռքը մատնելով «Կայսեր պատկերի առաջ»  
տեղի ունեցած ցույցի մասնակցողներին, թեմական  
տեղի ունեցած ցույցի մասնակցողներին, թեմական  
տեղի ունեցած ցույցի մասնակցողներին։ Յեղորին և Ծատուրին։  
Խավոր հրահրողներին։ Յեղորին և Ծատուրին։

Ցույցարանները վանդվում են դպրոցից և հրա-  
հրողների հետ միասին հեռացվում քաղաքից։ Նրանց  
մեծ մասը բոնում ե հետզհետո «Յերկրի» շավիղները։  
Մանրախոն և գանդապաշարժ Ծատուրը չհետեւց դրանց  
ծանրախոն և գանդապաշարժ Ծատուրը չհետեւց դրանց  
որինակին։ Նրան վիճակված եր հոգեոր լիակատար մի  
դպրոցին։ Նրան վիճակված եր հոգեոր լիակատար մի  
դպրոցին։ Եթերկրի արյունու ուղիներից դեպի կյանքի  
աղմկահույզ հրահրահակը։  
—

Ընկնելով Բագու՝ Ծատուրը գլուխ կանգնեց դաշ-  
նակցական այն փոքրաթիվ մտավորականների, վո-  
րակցական այն փոքրաթիվ մտավորականների վեցական անհրա-  
րոնք «կովկասյան խնդիրներով» վետպիկու անհրա-

Ժեշտությունն ելին զգում: Այդ մտավորականների ջանքերով եր, վոր Բագվում կաղմակերպության կից բացիկ «կովկասյան սելցիա»: Սակայն «սելցիայի» գոյությունը «վասնգավոր», գրեթե դավաձանական մի քայլ նկատվեց կուսակցության շրջանային կոնֆերանսի կողմից, և համառող «կովկասյանները» Ծատուրի հետ կազմեցին «անջատական» դաշնակների առաջին գրության: «Դարձիր առաջին կայանն եր դա, վորից հետո, լքելով մեշչանական ոռմանտիզմի ժառանգությունը, հերձյալի գիտակցությունը պետք և մաներ սոցիալական նոր կաղապարի մեջ և քաղաքական նոր ուժակի շրջան: 1903 թվի հոկտեմբերին Ծատուրն արդեն այն միքանի հայ մարքսիստների թվումն եր, վորոնք լույս ընծայեցին սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կաղմակերպության անդրանիկ մանիքստը:

Ն սվթաշխարհն արմատական բեկումն եր առաջացրել իր գիտակցության մեջ: Քաղաքական կենդանի պայքարի մթնոլորտում Ծատուրն որըստորե գաստիքակիում եր գորպես հեղափոխական մարքսիստ և դիրք ու ազգեցություն վաստակում վորպես նոր գաղափարների պատգամախոս: Մոքի սուր գիտալեկտիկայով, հանտորական աճող տաղանդով՝ նա ստանում եր անպարտ պահեմիսակի հոչակ անդրկովկասյան հայաշատ կենտրոններում, վառ հետաքրքրության առարկա դառնալով մանավանդ յերիտասարդական շրջաններում: Ազգային քաղաքական հին հասկացողությունների ու արժեքների վերագնահատման ժամանակներ ելին, և նա, ծանոթ հայ կյանքին և արտիստ հայ

խոռքի, սպասադինված մարքսիստական քննադատության գերազանց զենքով, ամենից ջախջախիչ հարված-թյան գերազանց զենքով, ամենից մատայնությանը ու նրա ներն եր հասցնում տիրող մատայնությանը ու նրա գրական հրապարակների բանավարներին: Վեճի բռնվերական մրցարանից խոռքի այնպիսի վարպետներ, քական մրցարանից խոռքի այնպիսի վարպետներ, իր զեկուինչպես Խաժակն ու Լուն Աթարելյանը: Իր զեկուցումը «Հայ-թուրքական ջարդերի անտեսական-քաղաքում Հայոց-թուրքական» մասին, վորով հրապարակ յերական պատճառների» մասին, վորով հրապարակ յերական նկատմամբ հետևողական և ավելի խորահայց նկատմական: Ավելի հետևողական և ավելի խորահայց նկատմական այսոր կարող և սկզբունքային թերերուծությունն այսոր կարող և սայլիքաքումներ մատնանշել իր այդ և բություններ ու սայլիքաքումներ մատնանշել այդ գործերի մեջ: Ժամանակակից մամուլն ու լառուրիշ գործերի մեջ: Ժամանակակից մամուլն ու լառուրիշ պահանջանակում եր խանդավառ հիացում, անզոր կատաղությունն միայն:

1905-6 թվականներն ամենից բեկմակորն ելին իր գրական-հրապարակախոսական գործունեյության համար: Նախընթաց տարիների աշխատությունները կրում ելին տակալին իդեալիստական մատաճողության կրում ելին տակալին իդեալիստական մատաճողության կրում ելին տակալին իդեալիստական մատաճողության կրում ելին տակալին իդեալիստական հոգկանիք: Հետագայում գրել ե միայն պատահական հոգկանիք: Հետագայում գրել ե միայն պատահական գլխավորապես դարձյալ գրական-քննադատավաճներ, գլխավորապես դարձյալ գրական-քննադատավաճներ, կան շաղախված մարքսիստական ըմբոնումով, սակայն կան շաղախված մարքսիստական հրատապ այժմեյակուրի քաղաքական-հասարակական հրատապ այժմեյականություններ:

Այլ թափ և այլ բովանդակություն ունեն առա-

չին հեղափոխության շրջանում հեղինակված աշխատավոր պատճենները:

«Հայ-թռչքական ջարդերի անտեսական-քաղաքական պատճառներին» նվիրված զեկուցումը, վոր լույս տեսավ նաև վորպիս տպագիր աշխատություն, հայ հասարակական-քաղաքական կյանքի մարքսիստական վերլուծության փայլուն նախագիծ եր: Պանիսլամիզմի շուրջը գաշնակցականների բարձրացրած վայոցներին ի պատճառին ԱԼ Ռուբենին մատնանշում եր պահարմենիզմի յերեսույթը՝ կատաղի զայրույթ առաջացնելով նայելունական բանակում:

Հասարակական զարգացման և ազգայնական իդեոլոգիայի վերլուծության տեսակետից ավելի կարևոր եր «Դաշնակցությունը և Նրա քաղաքական-հաստրակական արժեքը» վերնագրով հոդվածաշարքը։ Այդ գործը կիսատ մնաց և մեզ հասած վիճակում իսկ ձեզ ըստված և դրական առանցքից դուրկ մի հեղինակություն է:

Այդտեղ կդառնեք ընդպարձակ տեսություններ և՝  
պատմական մատերիալիզմի, և նրա «քննադատների»,  
և ոռուսահայ լիբրերալիզմի, և հայ քաղվենիության ու  
իր կուսակցության՝ Դաշնակցության մասին։ Հեղինակը գրում է «Լայն խավերի համար», ուստի և չի  
գրադփում նյութին վերաբերող հիմնական աղբյուր-  
ներով, ապէլի շուրջ հրապարակագրում ե, քան ուսում-  
նասիրում։

Բայց և այնպես մեղանում այդ գործն իր ըրուր վրիպութիւներով հասարակական յերկույթիների մատերիալիստական լուսաբանության առաջին սիստեմական փորձն է։ Հեղափոխական խառնվածքով, տրամաբանական կուռ հետևողականությամբ, պուրամիկական

սուր հակադրություններով, այդտեղ դուք կկտնեք մեծարված կուռքերի, փառաբանված հասկացողությունների անխնա մերկացումները ու վերագնահատումներ, վոր այսոր իսկ չեն կորցըել իրանց թարմությունն ու այժմեականությունը։ Հայոց գրականության մեջ մինչև այսոր իսկ այդ գործը Դաշնակցության իդեոլոգիայի միակ հիմնավոր քննադատությունն է։

Ավելի մշակված, ավելի ամբողջացած և պայքա-  
րի տեսակետից ավելի անմիջական նպատակը ունեն իր  
այս հոդվածները, վոր շոշափում են սոցիալ-դեմոկրա-  
տիայի կազմակերպական խողիքները: Այդ հոդվածները  
կազմեցին «Հայ կազմակերպության» իդեական արսե-  
նալը, ինչպես և ինքը հեղինակը գլխավոր և գրեթե  
միակ տեսաբանն եր «սպակցիֆիկներին» մեկուսացնող  
կազմակերպական հարցերում: Հեղափոխության դրս-  
ձոնների գնահատման մեջ Ծառուրը խոսքով և գրչով  
կանգնած եր քիչ քե շատ հետևողական «մեծամաս-  
նական» տեսակետի վրա, կազմակերպական խնդրում  
առաջարում եր մեզանում «Բունդի» հայկական վա-  
րիանալը: Ավելի հետեւողական «սպակցիֆիկները» հարե-  
ցին աղքային կուլտուրական ավտոնոմիայի տեսակե-  
տին, մի քանիսները, առաջ վաղելով, ավարտեցին ի-  
րանց քաղաքական կարյերը հայոց նոր Արշակավա-  
նում—թավվելիզում: Ծառուրը չդալաճանեց հեղափո-  
խական մարքսիզմի գրոշին: 1912 թ. գրեց ուշագրավ  
մի հոդված «աղքային կուլտուրական ավտոնոմիայի»  
դեմ: Հետագայում հրաժարվեց նաև կազմակերպական  
սիստեմի աղքային հերձվածից:

Հրաժարվեց «պայքարի փոխած պայմաններին»  
իր վերադրում: Զինանդիք: Մակայն քննել կազմակերպա-

կան աղբային սկզբունքի «նպատակահարժարությունը» նիշող պայմանները, — կնշանակեր քննել հենց այն սպեցիֆիկ» մտավախությունը, վորի գերազանց տարերից պիտի թալկանար Շատուրի հեղափոխական թափը, խունանար իր ստեղծարար-կարողությունը:

Իր դերն ավելի համեստ յեղափ, քան պետք եր յենթադրել իր տաղանդի չափից և իր գործի աղմկանույզ սկզբնավորությունից: Իր խոսքն ու գորիչը չունեցավ քաղաքական արժանի կշիռ ու նշանակություն: Իր գործունեյության շրջանը սեղմկեց ամփոփվելով հեղափոխական մարքսիզմի գրավոր և բանավոր պրոպագանդայի մեջ:

Պատահական յերեսությ չեր սա և վոչ ել իր «առակ դարձած ծուլության» հետևանք: Ծատուրը կապեց իր բախտը մի կազմակերպության հետ, վոր չըկարողացավ հարազատանալ անդամ բանվորական այն ազգային զանգվածին, վորի պայքարը դեկավարելու «սպեցիֆիկ» պաշտոնն եր ստանձնել: Վոչ այդ կազմակերպությունը, վոչ իր իդեալական պարագլուխը չելին կարող դեկավարի դիրք գրավել Անդրկովկասի բանվորական շարժման մեջ, քանի վոր զրել ելին իրանց աշխատանքը հեղափոխական պայքարի կազմակերպության սխալ հունի մեջ: Հայ բանվորական զանգվածներն իսկ գնացին այն դեկավարների յետեկց, վորոնք անցնելով բանվորական միջազգային կազմակերպության շարքերը՝ կարողացան միաժամանակ քաղաքական ուժ ու ազգեցություն նվաճել նաև աղջային կյանքի նեղ շրջանակներում:

Ավելի ակներկ դարձավ իր մեկուսացումն ու քաղաքական ստեղծագործական իմաստագուրկ ընթացքը ոհակցիայի տարիներին: Հոգու ամայությունը կամի-

ցավ բեղմնավորել բուրժուական զետության ջերմոցներում: Սակայն թվում ե, թե այդ վորոնումների առպարիզում իսկ վոչինչ չվաստակեց: Ընկնելով մի միջուկայրը, վորտեղ նա վարդապետող չեր, այլ աշակերծագությարը, վորտեղ իսկ անկարող եր անձուկ նյութականի պատճառով, — դառն ու վիրավոր հոգով դարձավ ծննդավայր, այնտեղ, ուր անցել ելին իր պատահական տարիները, գավառական անդորրության ծանրությունը, սեմինարիայի պատերի մեջ զոհելով իր ամսությունը յեռանդն ու կարողությունը նոր սերունդը որերի համար դաստիարակելու գործին:

Կլուչեսկին համեմատում ե իր հերոսներից մեկին առագաստի հետ, վոր միայն մըքկի ժամանակ և իր գերի մեջ, մինչդեռ խաղաղության ժամին քարշ և ընկնում կայմից վորպես անպետք լաթ:

Հոկտեմբերը այն մըքիկն եր, վոր հուզելով հին հեղափոխականի մեջ պայքարի հույն ու կիրքը, նման նեղրեց նրան տարերային ուժերի ներգործությանը յենթարկվող այդ առագաստին: Սակայն ցանկալի կայանը հասնելու բախտ նրան չեր վիճակված:

Առագաստը պատռվեց, տեղի տալով ներհակ տարերքի գերազանց ուժին, ջրերի անծայլը տարածության մեջ մշտական հանգիստ գտնելու համար:





ՊԵՏՀՐԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ  
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԱՌ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Հայ-ռուսական որիենտացիալի ծագ-  
ման ինդիբը, պատմական-քննադատա-  
կան ուսումնասիրություն վավերագրերի  
ճնկալիներավ (120 հջ), 1921 թ., Վա-  
ղարշապատ (սպառված) . . . Գինը 1ռ.—կ.

ԱՌ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Պրոլետարական հեղափոխությունը և  
ուսուցչությունը (28 հջ), 1925 թ., Վա-  
ղարշապատ. . . . . Գինը — 10կ.  
» » Գաղութահայ ինդիբներ (26 հջ),  
1925 թ., Յերևան (սպառված).

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.—Մեր հեռանկարները և լենինիզմը  
(77 հջ), 1926 թ., Յերևան. . . Գինը — 30կ.  
» Մեր պայքարը՝ նվաճումները և անե-  
լիքները (40 հջ), 1925 թ., Յերևան. Գինը — 30կ.  
» Համազգային կրիզիսը (30 հջ), 1926 թ.,  
Յերևան. . . . . Գինը — 15կ.

Գինը 15 կող.

ՀՀ Ազգային գրադարան



NL0188567

